Այդ տեղն է նաեւ որ կ'կառուցուի այժմ իբրեւ Մանկապարտէզ ծառայող շէնքը, որուն վերնայարկը շարջ կէս դար կ'գործածուի իբր Մասուս-աղօթարան Հասարակութեան, և ներքնայարկն ու շուրջի սենեակները՝ իբր բնակարան քահանայից և ժողովատեղի։

1883-ին, Տ. Գաբրիէլ Եպիսկոպոսի վախճանէն 17 տարիներ, և իր յաջորդին՝ Տ. Մեսրոպ Եպս. Սուքիասեանի հրաժարելէն չորս տարիներ ետքը, երբ թափուր էր առաջնորդական աթոռը, Թագաւոր Փաշա Յակոբեանի նախաձեռնութեամբ և հակողութեամբ, և իբր 6000 ոսկոյ ծախքով կ'կառուցուի ներկայ Ս. Պողոս-Պետրոս Եկեղեցին, ազգապատկան նոյն դեսնին հիւսիս-արեւելեան մասին վրայ։

Այդ միջոցին, երեսուն և ինը տարիներէ ի վեր մեռած (1844), և, մատուռին առաջակողմի հրապարակին վրայ կեդրոնը, շքեղ դամբարանի մը մէջ թաղուած էր Պողոս Պէյ Եուսուֆ (*), Եգիպտահայ գաղութին վերջին շրջանին պետական Հայ աւագանիին ռահվիրան և քաջալերիչը, որ իր դիրքին բարձրութեան վրայ, օր մը չէր մոռցած իր հասարակութիւնն ու եկեղեցին։

Թէեւ անցած էին այսպէս արդէն բաւական տարիներ, բայց ժողովուրդը չէր մոռցած բարեբարին երախտիքը, ու տաճարին շինութեան ամբողջ գումարն ինքնին արդիւնքն եղած ըլլալով անոր կազմակերպած և վերհսկած մատակարարական իմաստուն անտեսութեան, բարենկամ մտածումը ունեցան, եկեղեցին նուիրել Ս. Պողոս-Պետրոս Առաքելոց անուան, այս կերպով նոյն տեղն յաւերժացնելու համար անունն ու յիշատակը Պողոս Պէյի և իր հարազատին Պետրոսի, որ նոյնպէս Զմիւռնիոյ մէջ և այլուր նշանաւոր էր եղած իր ազգօգուտ ծառայութիւններով։

(*) Եկեղեցւոյ շինութեան աւարտումն վերջը, Պողոս Պէյ Եուսուֆի ոսկերոտին փոխադրուեցաւ տաճարին հիւսիսակողմի արտաքին պատին կողքին, եւ վրան կառուցուեցաւ նոր եւ շքեղագոյն մարմարեայ դամբարան մը, հայերէն եւ ֆրանսերէն տապանագրութեամբ եւ քանդակագեղ դրուագումներով։